

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԶԱՆ ՍԹՎԵՆՍԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՆԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՆԱՐԱԶԱՏ ԶԱԲԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՃԱՆ ՍԹՎԸՆՍ,
ՈՐ Ի ՖՐԷԶՆՕ, ԱՄՆ**

Յարգարժան պրն Սթիվընս,

Նամագգային մեր հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Նայրապետական Մեր օրհնութիւնը, ջերմ սէրն ու բարեմաղթանքները:

ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմ կապարած Նովուապետական Մեր այցելութեան ընթացքին ուրախ առիթ ունեցանք Ֆրէզնոյում հանդիպել Ձեզ եւ ծանօթ դառնալ Ձեր աստուածահաճոյ գործունէութեանը: Երկար փարիներ Դուք աշխոյժ մասնակցութիւն էք բերում Ֆրէզնոյի Սուրբ Պօղոս եկեղեցու համայնքային կեանքին, նուիրեալ ծառայութեամբ ու ազնիւ բարերարութիւններով սապարում եկեղեցու եւ Տիրախնամ թեմի կողմից իրականացուող ազգօգուտ եւ եկեղեցաշէն ծրագրերին: Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին միշտ շէն ու պայծառ եւ հայորդեաց ազգային-եկեղեցական կեանքը աշխոյժ ու կազմակերպուած տեսնելու նախանձախնդրութիւնը եւ գոհողութեան պապրաստականութիւնը ճանաչում ու յարգանք են բերել Ձեզ Արեւմտեան թեմում, որին ուրախութեամբ ականապես եղանք նաեւ Մենք:

Մեզ համար գոհունակութիւն է գնահատանքի խօսք ուղղել հաւաքաւոր հայորդու՝ նաեւ հանդէպ համագգային մեր հոգեւոր սրբազան կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դրսեւորած Ձեր ջերմ զգացումների ու որդիական սիրոյ համար: Իշխանական ոգով Սուրբ Էջմիածնին կապարած Ձեր մեծագումար նուիրապտութիւնը մեծապէս պիտի նպաստի Զրիստոսահիմն եւ լուսաւորչապսակ Մայր Աթոռի շինութեանն ու պայծառութեանը, Նայրենի մեր Երկրում հոգեւոր կեանքի վերազարթօնքին:

Եկեղեցական մեր կեանքում Ձեր իրագործումները բարի վկայութիւններ են Ձեր հաւաքաւոր, ազգասէր ու հայրենասէր ոգու, եւ Մենք, Ձեր վաստակի բարձր գնահատանքով, ուրախութեամբ սրտի ընդառաջ ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրպէրեանի խնդրանքին, Նայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ւ Ո Ր Ի Չ

պապրոյ բարձրագոյն շքանշանը:

Միաձնի Իջման Սուրբ Սեդակի առջև Մեր աղօթքն ենք բարձրացնում առ Ամենախնամն Աստուած՝ հայցելով, որ Տէրը պահպանի Ձեզ առողջ ու կենսուրախ եւ Ձեր կեանքը օրհնի գործոց յարանորոգ յաջողութիւններով ու երկնաւոր բարիքներով:

Մաղթում ենք, որ Բարձրեալ Տէրը զօրացնի համայն մեր ժողովրդի եկեղեցասիրութեան եւ հայրենանուիրումի ոգին՝ Իր հանապազ հովանու ներքոյ միշտ առաջնորդելով մեծարժան գործերի:

Շնորհք Տեսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցիս ընդ ձեզ եւ ընդ ամենեւեւսնդ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ

Տուալ Կոնդակս ի 9-ն Նոյեմբերի

յամի Տեսուն 2005 եւ ի թուին հայոց ՌՆԾԴ

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

ընդ համարաւ 327